

րադիչ սրբազանը քարոզ խօսեց Ն. Արքու-
թեան տօնի առթիւ. իսկ պատարադից յետոյ
Ն. Վեհափառութիւնը վեհարան գնաց, որտե-
ղից ապա իջաւ վանքի աւագ եկեղեցու դաւի-
թը, և այդտեղ կատարուեցաւ Հայրապետական
մաղթանք՝ ժողովրդի ստուար բազմութեան
ներկայութեամբ: Մաղթանքից յետոյ Ն. Արք-
ութեան մօտ այցելութեան էին գալիս մինչեւ
երեկոյեան ժ. 5-ը Հայ հոգեւորականութիւնը
և զանազան բարձրաստիճան անձինք: Նոյն օրը
երեկոյեան Ներսիսեան Գաբանոցում Վեհ.
Հայրապետի օժման տարեգարձի առթիւ տե-
ղի ունեցաւ գրական երեկոյթ, որ նուիրուած
էր ամբողջովին Տերունազարդ Հայրապետի
գրական գործունէութեանը:

Հոկտ. 12-ին, առաւօտեան ժ. 11-ին,
Ն. Վեհափառութիւնը հաճեցաւ այցելել Կով-
կասեան ցուցահանդէսը, ուղեկցութեամբ Գեր.
Ա. եպ. Այվազեանի և Տ. Տ. Գարեգին, Ար-
սէն, Կորնէն, Մամբրէ և Մատթէոս վարդա-
պետներ: Ն. Արքութեանը ղիմաւորեցին ցու-
ցահանդէսը կազմակերպող մասնաժողովի նա-
խագահ Սուլթան — Կրիմ — Գիրէյ, ցուցահան-
դէսի կոմիտար իշխ. Ի. Անդրոնիկով և զանազան
բաժինների ներկայացուցիչներ: Ն. Արքութիւ-
նը իջաւ յատուկ առանձնասենեակում, ուր
իշխանուհի Անդրոնիկովա սուրճ մատոյց Նորին
Վեհափառութեանը: Սուրճ ընդունելուց յե-
տոյ Վեհ. Հայրապետը բարեհաճեց նայել ցու-
ցահանդէսի մեքենաների բաժինները, որի ժա-
մանակ երկար կանգ առաւ Խան Աղեանի և
Տէր-Զաքարեանի մեքենաների առաջ: Ապա
Ն. Արքութիւնը նայեց պտուղների և անայ-
նազործութեան բաժինները, ուր և երկար
խօսակցեց շրջապատողների հետ: Ն. Արքու-
թեան ուշադրութիւնը գրաւեց առանձնապէս
մանկավարժական բաժնում կոյր աշակերտների
կարգալ — գրելը, որոնց օրհնեց և ցուցահան-
դէսի միւս բաժինները նայելուց յետոյ ցերե-
կուայ ժ. 1-ին ուղեւորուեցաւ վեհարան զոհ
օրտով:

Հոկտ. 16-ին առաւօտեան ժ. 10-ին Ն.
Վեհափառութիւնը այցելեց Կովկասի Կառա-
վարչապետ գեներ. ատիւդ. իշխ. Գալիցինին, որի
մօտ մնաց մի քանի Կառ. Ն. Վեհափառութիւնը
այցելեց կառավարչապետի օդն. դէն,

լէյտ. Ֆրեդէրիկ Թիֆլիզի Վրաց ադմուալանտ-
թեան պարագլուխ իշխ. Մելիքովին և Թիֆ-
լիզի նահանգապետ Ալեքսինին և 12 1/2 ժամին
վերադարձաւ վեհարան հանգստանալու: Հե-
տեւալ օրը, հոկտ. 17-ին, իշխ. Գալիցին փոխ
— այցելութեան եկաւ Ն. Արքութեանը:



ՄԱՅՐ ԱԹՈՒ

Սինօղի անդամ Բարձր. Բագարատ վար-
դապետ Գ. Թաւաքալեանի հետ օգոստոսի
վերջերին Մ. Աթոռ էր եկել Տ. Գէորգ վարդ.
Նալբանդեանց, որ Աղթամարի միաբաններից
լինելով՝ վերջին մի քանի տարին պաշտօն է
վարել Բուլղարիայում և Ֆրանսերէն սովորել,
ինքնակրթութեամբ յառաջացել: Տ. Գէորգ
վարդապետ Արապու. ս. Թաղէոս առաքելոյ
վանքի վանահայր կարգուեցաւ և սեպտեմբեր
ամսին ուղեւորուեցաւ դէպի Պարսկաստան
իւր պաշտօնատեղին:

Գրեթէ միաժամանակ ս. Լ. Միսիսիւմ էր
նաեւ Աերաստացի Տրիփոն վարդապետ, որ նշա-
նակուեցաւ Մագարթու. ս. Սաեփաննոս նա-
խավայր վանքի վանահայր. իսկ նախկին վա-
նահայր Տ. Արքաշամ վարդապետ Ռշտունի
յետ կանչուեցաւ Մ. Աթոռ:

Խաչվերացի աօնին Մ. Աթոռում հիւր էր
Բագուեցի յայտնի վաճառական պ. Համբար-
ձում Մելիքեան, որ իւր ընկերակիցների կողմից
յանձնարարութիւն ունէր՝ Վեհափառ Հայ-
րապետի հաճութիւնն առնելու և անօրէնու-
թիւնը խնդրելու, որպէս զի Նորին Արքու-
թեան Բագու քաղաքն այցելելու առթիւ ժո-
ղովուած զումարը մի նոր վեհարանի շինու-
թեան համար զործադրուի: Վեհափառ Հայ-
րապետի հրամանով մի կարգադրիչ յանձնա-
ժողով կազմուեցաւ՝ նախադահութեամբ Գեր.
Արխաանկէս արքեպիսկոպոսի և անդամակցու-
թեամբ Գեր. Յովհաննէս եպիսկոպոսի, Տ. Մխի-
թար, Տ. Կարապետ, Տ. Եղիշէ Ահարօնեան
վարդապետների և դպ. Գալուստ Տ. Մկրտչեա-
նի, որ պ. Մելիքեանի հետ կարեւոր խորհրդ-

դակցութիւններ ունենալուց յետոյ՝ սխեց պատրաստութիւններ տեսնել, որպէս զի առաջիկայ դարնան նոր շինութեան հիմը դրուի:

Սեպտ. 23 ին Գեր. Մաղաքիա եպիսկոպոսի ձեռքով ծայրագոյն վարդապետութեան աստիճան ստացաւ Տ. Եղիշէ վ. Մուրադեան, որ կարգուած յինելով Ասրպատականի թեմի առաջնորդ, մեկնեց յետոյ գէպի իւր պաշտօնաւանդին:

Սեպտ. 24 ին Գեր. Ղևոնդ եպիսկոպոս կուսակրօն սարկաւագ ձեռնադրեց ս. Գայիանէի վանքում Աղէքսանդր Մուրադ-Բէկեանին, որ իւր ուսումն աւարտել է Ներսիսեան գալաւնոցում և ապա մի քանի տարի ուսուցիչ է եղել ծխ. դպրոցներում, վերակացու Ներսիսեան գալաւնոցում և Վեորդ Թովմապեանին, որ վերջին տարին աւարտեց ուսումը Մ. Աթոսի ձեմարանում և կարգուեցաւ նոյն ձեմարանի անտես, կրօնի և թուարանութեան ուսուցիչ ստորին դասարաններում:

ՊԵՏՐՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՅՎԱԶԵԱՆ



Երկարատե հիւանդութիւնից յետոյ Ախալցխայում՝ իւր ծննդախայում անցնել օգոստոսին կիքեց իւր մահկանացուն Ս. Էջմիածնի միտան Պեարոս վարդապետը: Նա ծնուել էր 1842 թուականին Ախալցխայում. ուսումն ստացել է նոյն քաղաքի Կարապետեան հոգեւոր դպրոցում և որպէս յառաջագիւղ աշակերտ՝ միջանակ է ընդունել նոյն ժամանակ Վրաստանի և Իմերէթի առաջնորդ Կարնեցի Կարապետ արքեպիսկոպոսի ձեռքից: 1858 թուականին ուրաւ է ստացել իսկ 1870 թը-ուականի նոյեմբեր 20-ին ձեռնադրուել է սարկաւագ: Յաջորդ տարուայ փետրուար ամսին նշանակուել է Գեղարգայ վանքում վանահօր օգնական և 2 ամիս յետոյ՝ ապրիլի 5-ին՝ կուսակրօն քահանայ ձեռնադրուել Վհայեանեան Պեարոս եպիսկոպոսի ձեռքով: 1875 թուի նոյեմբերի 14-ին Ս. Անդրէի հրա-

մանով կարգուել է Մուղնոյ վանքի վանահօր, իսկ 1877 թուին այդ պաշտօնի հետ ստացել է և Աշտարակի ու իւր շրջակայքի բարեկարգչի պաշտօն, որը վարել է մինչև յաջորդ թուականի սեպտեմբեր ամիսը: 1878 թուականին Գ. Կաթուղիկոսի հրամանով նշանակուել է նոր Նախիջևանի ս. Խաչ վանքի վանահայր, 2 տարի յետոյ, 1880 թուին՝ ստանձնել է և նոր Նախիջևանի հոգեւոր կառավարութեան նախնականութեան պաշտօնը: 1883-1884 վարել է Վաղարշապատի Սարգսապատի իսկ նորանից յետոյ՝ նոր Բայազետի Գեօրջայի և Գարաշէլակի դործակալութեանց պաշտօնը: 1886 թուին կրկին անդամ վանահայր է կարգուել Մուղնոյ Ս. Գեորգայ վանքի: Յաջորդ տարին կարգուել է Ղըղարի փոխանորդ: Այդ պաշտօնը վարել է մինչև 1891 թուականի յունիսի 14-ը, ապա կամու հրաժարուելով վերադարձել է Ս. Էջմիածին և նոյեմբերի 12-ին ուղարկուել է Ագուլիս, որպէս վանահայր Ս. Թովմայի վանքի:

1894 թուին Վհայախա Հայրապետի հրամանով կարգուել է Ախալցխայի և Ախալքալաքի փրձակների փոխանորդ, ուր մնացել է մինչև 1899 թուականը: Ապա վերադառնալով Ս. Էջմիածին վարել է զանազան ժամանակաւոր պաշտօններ: Իւր անբուժելի հիւանդութիւնը դարմանելու համար նա դարնան Տփլիս և ապա, բժիշկների խորհրդով իւր ծննդավայրը գնաց, ուր և վրայ հասաւ անխուսափելի մահը — Հանգուցեալը իւր աշխատութեանց համար արժանացել է երկիցս վարձատրութեանց, Բեսարարից թեմակալ առաջնորդ Տ. Մակար Արքեպիսկոպոսից ստացել է ծաղկեայ կերպասէ փխն, ապա նոյն հանգուցեալ Տ. Մակար Կաթուղիկոսի հայրապետութեան օրերում արժանացել է վարդապետական տիանակաւ լոնջախաչի: —

Հանգուցէ Տէր զհոգի պաշտօնէին ս. Եկեղեցւոյ ի լոյս երևաց իւրոց:

ՃԵՄԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Սեպտեմբերի 29-ին, ս. Գեորգ զօրավարի